մատիտ *madid* Bleistift,
յոգնած *joknads* müde,
տոմսակ *domssag* Zettel, Karte,
պէտք *bêdkh* Nothwendigkeit,
փայտ *phajd* Holz,
կրթութիւն *gèrthuthiun* Übung,
բաղձալ *paghtsal* wünschen,
խելացի *chelathsi* weise,
մեռցնել *merthsnel* tödten,
ուշ *usch* spät,
իրաւունք *irawunkh* Recht,
գաւազան *kawazan* Stock,
հոն է *hon ê* er ist dort,
պատասխան *badass-chan* Antwort,
կաղնի *gaghni* Eiche,
կարծր *gardsr* hart,
վարպետ *warbed* Meister,
նման *nman* gleich,
խոհեմ *chohem* klug,
հարկ *harg* nöthig,
այսպէս *ajssbêss* so,
մատ *mad* Finger,
պակաս է *bagass* es fehlt, es ist nöthig.

## Uebung.

Es ist (dazu) nicht mehr viel (այլ եւս շատ) nöthig. Es würde viel fehlen (Imperf.), daß ich ebenso reich (հարուստ) wäre (Imperf.), als wie du. Sie glauben (կարծել), daß Sie mir alles gegeben haben, aber (dazu) fehlt (noch) viel (շատ բան). Ich möchte (կ՚ուզէի), daß dieses Haus mir (իմս) gehören (ըլլար) würde. Es fehlte wenig (քիչ մնաց), daß ich das Geld verloren hätte (պիտի կորսնցնէի). Es fehlte wenig, daß ich das Leben (կեանքս) verloren hätte. Sie wünscht, daß wir tugendhaft (առաքինի) sein sollten. Ist dein Vater zu Hause? Nein, mein Herr, er ist bei seinem Freunde. Das Herz (սիրտ) dieses Mannes ist gut. Seiet gegen Euresgleichen gut. Ich wünsche, daß ihr klug seid. Es fehlte wenig, daß die Sache

so (պէս) ausgieng (ըլլար), wie er es sagte (Participial-Construction, das Participium steht wegen des darauffolgenden պէս im Genitiv). Wir hätten (Imperf.) uns beinahe (քիչ մնաց) die Finger abgeschnitten (կտրել). Er wäre beinahe gestorben (մեռնիլ mit պիտի). Sein Anblick (տեսքը) flößt (ազդել) Achtung (յարգանք) und Bewunderung (զարմանք) ein. Du wirst auf das Land (գեղ) gehen und ich (իսկ ես) werde in die Stadt zurückkehren (դառնալ).

---

# XV. Section.

## Die passive Conjugation.

Die passiven Verba werden dadurch gebildet, daß man die Infinitivendungen ohne Unterschied, also ել, իլ, ալ und նալ in ուիլ verwandelt, nur wird bei der Ալ- und Նալ-Conjugation statt des Präsensstammes der Perfectstamm genommen, z. B.:

| | | |
|---|---|---|
| Լս—ել | wird zu | լս—ուիլ |
| սորվ—իլ | „ | սորվ—ուիլ |
| կարդ—ալ (կարդաց—ի) | „ | կարդաց—ուիլ |
| մոռ—նալ (մոռց—այ) | „ | մոռց—ուիլ |

Die so gebildeten passiven Verba conjugieren nun ganz nach der zweiten (Իլ-)Conjugation, z B.:

Հան—ել — հան—ուիլ, հան—ուեցայ, հան—ուէ, Particip. հանուող, հանուած,
խմ—ել — խմ—ուիլ, խմ—ուեցայ, խմ—ուէ,
խօս—իլ — խօս—ուիլ, խօս—ուեցայ, խօս—ուէ,
համար—իլ — համար—ուիլ, համար—ուեցայ, համար—ուէ,
կարդ—ալ — կարդաց—ուիլ, կարդաց—ուեցայ, կարդաց—ուէ,
իման—ալ — իմաց—ուիլ, իմաց—ուեցայ, իմաց—ուէ:

Viele Verba behalten jedoch die Form der alten Sprache bei, z. B.: բաժանիլ, բաժանեցաւ und բաժանուիլ, բաժանուեցաւ, u. s. w.; natürlich entfällt dann auch das ու im Part. Perf. զարդարած statt զարդարուած:

Mittelst der Hilfsverba ել und ըլլալ und des Particip. des Perfect. können ähnlich der alten Sprache unzählige zusammengesetzte Zeiten gebildet werden, z. B.: լսած եմ ich habe gefühlt (j'ai senti nicht je sentis). Das Particip. auf ած hat in solchen Zusammensetzungen immer eine bestimmte Bedeutung, während dasjenige auf եր bei der Handlung eine Ungewißheit anzeigt.

# Uebung.

Երկաթը կը ծեծուի մինչդեռ տաք է։ Այս գինին գլուխը կը զարնէ։ Ձիուն վրայ կը նետուի։ Երբ հօրս տունը կը բնակէի, աւելի կանուխ կ՚ելլէի, որչափ հիմա չեմ ըներ։ Քիչ մնաց որ պիտի սպաննուէր (getödtet wurde)։ Ամենէն կ՚ատուի։ Անխոհեմութեանդ պատիժը պիտի կրես։ Իր որդիէն սպաննուեցաւ։ Որչափ աղքատներ մը մոռցուին։ Հօրերնուս ինչքերը ծախուեցան։ Աս հանդիսութեան պիտի հրաւիրուիք։ Քիչ մը բանէ կը վախնային։ Եղբայրն իր ծնողացը դարձուած էր։ Ասորիք միջնաբերդէն վռնտուեցան։ Հայրդ յանցանքներուդ լուրը առած էր։ Ոմանք թաղմանէ զրկուեցան։ Ջուրը կը նետուին։ Բոլոր օրը աշխատելու հարկաւորեցանք։ Հարցափորձ մտնելէն ետեւ պիտի պատժուին։ Ահագին հովի մը բռնուեցանք։ Թագաւորին ըսին որ մենք Փիւնիկեցւոց նաւի մը մէջ գտնուած էինք։ Չէի կարծեր որ հօրմէն սիրուած ըլլար։ Կը կարծէք որ այչափ քիչ բանէ կը վախնա՞ն։ Հովիւը թող տուած ըլլար նէ, գառնուկը գայլէն կը յափշտակուէր։

**Երկաթ** *jergath* Eisen,
**տաք** *dakh* warm,
**գլուխ** *kluch* Kopf,
**աւելի** *aweli* sehr,
**որչափ** *uorthschaph* so,
**հիմա** *hima* jetzt,
**ատել** *adel* hassen,
**անխոհեմութիւն** *anchohemuthiun* Unklugheit,
**ծախել** *dsachel* verkaufen,
**հանդիսութիւն** *hantissuthiun* Feierlichkeit,
**վախնալ** *wachnal* erschrecken,
**դարձուած** *tartswads* zurückgegeben,
**վռնտել** *wrréndel* verjagen,
**յանցանք** *janthsankh* Missethat,
**լուրը առած ըլլալ** benachrichtigt worden sein,
**զրկել** *zêrgel* verweigern, entziehen,
**հարցափորձ մտնել** fragen,
**պատժել** *badžel* bestrafen,
**հով** *how* Wind,
**գտնել** *kdnel* finden,
**հովիւ** *howiu* Hirte,
**նէ**, siehe XX. Lection,

**գառնուկ** *karrnug* Lamm,
**մինչդեռ** *minthschterr* während,
**ծեծել** *dsedsel* schlagen,
**զարնել** *zarnel* angreifen,
**կանուխ** *ganuch* früh aufgestanden, früh auf,
**չեմ ըներ**, siehe Lection XVI,
**կրել** *grel* leiden,
**աղքատ** *aghkhad* arm, [sein,
**մոռցուիլ** *morrthsuil* vergessen,
**ինչք** *inthschkh* Besitzthum,
**հրաւիրել** *hrawirel* einlanden,
**ծնող** *dsnogh* Erzeuger,
**Ասորիք** *assorikh* die Syrer,
**միջնաբերդ** *mitschnapert* Citadelle, Burg,
**ոմանք** *omankh* einige,
**թաղումն** *thaghumn* Begräbnis,
**հարկաւորիլ** *hargaworil* bemüssigt sein,
**ահագին** *ahakin* schrecklich,
**բռնել** *perrnel* erfassen,
**սիրել** *ssirel* lieben,
**թող տալ** verlassen, [ben,
**յափշտակել** *japhschdagel* rau-
**գայլ** *kajl* Wolf.

## Uebung.

Der Feind (Թշնամին) ist uns auf den Fersen (մեր ետեւէն). Ich würde wünschen (բաղձալ Imperf.), daß dieses Zimmer (սե-նեակ) sorgfältiger (աւելի զգուշութեամբ) gereinigt (մաքրել) würde. Mein Bruder gieng aus dem Hause. Sie kamen von Spanien (Սպանիայ, Abl.). Glaubt ihr, daß sie in der Stadt getödtet wurden? Ist es möglich, daß das Kind von jenem Manne getödtet wurde? Die Feinde wurden aus der Burg unserer Stadt vertrieben. Josef wurde von seinen Brüdern an Kaufleute verkauft. Die Güter deines Bruders werden heute (այսօր) verkauft. Sie sagten mir, daß er in einem englischen Schiffe gefunden wurde. Einige wurden getödtet. Diesem Manne wird das Begräbnis verweigert werden.

---

# XVI. Section.

### Verneinte Verba (Բացասական բայեր).

Der Indic. Perf., der Subjunctiv des Präsens und Imperf. bilden ihre verneinte Form, indem sie dem Verbum ein չ vorsetzen, z. B.: չլսեցի ich habe nicht gefühlt u. s. w.

Der Indic. des Präsens und Imperf. wird mit Hilfe des verneinten Verbums ել gebildet, wobei sich das լ des Infinitivs in ր verwandelt, d. h. wird in Particip. verwandelt, z. B. լսել in լսեր daher bedeutet չեմ լսեր ich fühle nicht. In der dritten Person des Singulars kann man statt չէ auch չի sagen, z. B.: չի լսեր:

Der verneinte Imperativ wird im Singular mittelst der Negativpartikel մի gebildet, welche der verneinten „Infinitivform“ vorgesetzt wird, z. B.: մի լսեր fühle nicht. Im Plural wird die Partikel մի der zweiten Person Plural des Subjunctivs Präsens vorgesetzt, z. B.: մի լսէք fühlet nicht. Allen anderen Formen wird bloß ein չ vorgesetzt. So lautet auch der Infinitiv չլսել nicht fühlen. Das Passivum, welches bei allen vier Verben dieselbe Form hat, fügt sich auch vollkommen der oben aufgestellten Regeln.

Das ի von մի und չի (չէ) wird vor Verben, die mit einem Vocale beginnen, ausgelassen und dieser Ausfall ebenfalls durch ein Apostroph angezeigt.

## Uebung.

Ընել չեմ ուզեր: Բան մը խմել կ'ուզե՞ն: Բան մը խմել չեն ուզեր: Երգ մը չերգեցիր: Գիրքը չփնտռեց: Քա-ղաքավար չեղանք: Օգտակար պիտ'որ չըլլա՞մ: Կրակս կ'ուզե՞ս

վարել։ Կ՚ուզեմ, բայց չեմ կրնար։ Այս մարդիկը կ՚ուզե՞ն իրենց գործերը վաճառել։ Զանոնք վաճառել չեն ուզեր։ Գրել չի գիտեր։ Ձեզի խօսիլ կ՚ուզէ՞։ Ինծի խօսիլ չ՚ուզեր, այլ ձեզի։ Կ՚ուզէ՞ք անոր գրել։ Չեմ ուզեր անոր գրել, այլ անոր եղբօրը։ Միսը չկտրեցին։ Կարդալ գիտէ, բայց գրել չի գիտեր։ Մէկուն երբեք վնաս ըրած չեմ։ Սքեմը կրօնաւոր չ՚ըներ։ Աղէկ խօսիլը լեզուն չի մաշեցըներ։ Չեմ կրնար գլուխ հանել։ Այս ձեր կարծիքն է։ Մի տարակուսիք։ Չի կարծեր որ մենք աղքատ ըլլանք։ Չէի կարծեր որ երջանիկ էին։ Ձեզմէ վարիններուն միշտ խիստ մ՚ըլլաք, ու անոնց տկարութեան վրայ գթացէք։ Պանիր չեմ ուտեր։ Ձեռուըները չլուաց։ Անիկայ չտեսայ։ Վախնալով որ չգայ։ Հռոմայեցիք Յունաստանի արհեստները չէին գիտեր, ու պատերազմ գիտնալը բաւական կը սեպէին։ Չեմ ուզեր որ ինծի շողոքորթես, հապա կ՚ուզեմ որ մտածածդ համարձակութեամբ յայտնես։ Հացը չտուիր։ Բոլոր օրն ալ աշխատելու ըլլայի, չէի կրնար գլուխ հանել։

**Երգ** *jerg* Gesang,
**փնտռել** *phêndrrel* suchen,
**օգտակար** *okdagar* nützlich,
**կրնալ** *gernal* können,
**երբեք** *jerpekh* jemals,
**սքեմ, ի** *sskhem* Ordenskleid,
**լեզու** *lezu* Zunge,
**հանել** *hanel* herausziehen, herausfinden,
**տարակուսիլ** *daragussil* zweifeln,
**երջանիկ** *jertschanig* glücklich,
**միշտ** *mischd* immer,
**տկարութիւն** *dgaruthiun* Schwäche,
**վրայ** *wraj*, mit vorhergehendem Genitiv, über,
**լուալ** *lual* waschen,
**Հռոմայեցի** *hromajethsi* Römer,
**արհեստ** *arhessd* Kunst,
**սեպել** *ssebel* meinen, halten für,
**պատերազմ, ի** *baderazm* Krieg,
**պատերազմ գիտնալ** Kriegskunst,
**հապա** *haba* sondern,
**մտածել** *mdadsel* denken,
**յայտնել** *jajdnel* erklären,
**բոլոր** *polor* ganz,
**աշխատիլ** *aschchadil* sich anstrengen, arbeiten,

**երգել** *jerkel* singen,
**քաղաքավար** *khaghakhawar* höflich, eigentlich städtisch,
**գորգ, ի** *kork* Teppich,
**վնաս, ու** *wnass* Schaden,
**կրօնաւոր** *grônawor* Mönch,
**մաշեցընել** *maschethsenel* verderben,
**կարծիք** *gardsikh* Meinung,
**աղքատ** *aghkhad* arm,
**վարին** *warin* untergeben,
**խիստ** *chissd* strenge,
**գթալ** *kthal* Mitleid haben,
**ուտել** *udel* essen,
**պանիր** *banir* Käse,
**վախնալ** *wachnal* fürchten,
**Յունաստան** *junassdan* Griechenland,
**բաւական** *pawagan* genügend, hinreichend,
**շողոքորթել** *schoghokhorthel* schmeicheln,
**համարձակութիւն** *hamartsaguthiun* Offenheit, Aufrichtigkeit,
**հանել** *hanel* finden, herausbringen,
**գլուխ հանել** beendigen.

## Uebung.

Sie wollen sich die Hände nicht waschen. Ich kann diesen Käse nicht essen. Dieses Brot ist für uns nicht hinreichend, denn (քանզի) wir sind heute sehr hungrig, da (Part. Constr.) wir den ganzen Tag gearbeitet haben. Die Kriegskunst genügt nicht für ein Volk (ազգ), um reich (հարուստ) zu werden. Ich habe den ganzen Tag dieses Buch gelesen, aber ich konnte damit nicht zu Ende kommen. Erkläre mir offen, was du von meiner Idee (կարծիք) hältst. Ich glaube, daß die Umstände (պարագան) nicht genügend bekannt sind, um das Ganze zu Ende zu bringen. Ich glaube nicht. Er will meinen Wein nicht trinken. Sie essen das Brot nicht. Ich habe ihm niemals einen Schaden zugefügt.

---

# XVII. Section.

## Umstandswörter (Մակբայ).

Die Umstandswörter werden im Neu-Armenischen eingetheilt in: 1. eigentliche Umstandswörter (բուն մակբայներ), 2. substantivische (գոյականէ), 3. flectierte (հոլովեալ) 4. adjectivische (ածականէ), 5. pronominale (դերանուանական) und 6. durch Verdoppelung entstandene (կրկնաւոր).

### Eigentliche Umstandswörter.

Die eigentlichen Adverbia sind einfache Wörter, wie z. B.. ստէպ oft, oder Wörter die mit Hilfe von Suffixen in Adverbia verwandelt wurden, wie z. B.: մեծապէս in großartiger Weise, իշխանաբար fürstlich, mächtig, սրտանց aufrichtig, u. s. w.

1. Umstandswörter der Art und Weise (որակական):

Ի՞նչպէս *intschbêss* wie? (ohne Frage) so, zum Beispiel, wie, gleichwie,
ինտո՞ր *indor* wie?
հազիւ *haziu* kaum,
սաստիկ *ssasdig* heftig,
բռնի *pěrrni* gewaltthätig, zum Trotz, u. s. w.,
ալ *al* mehr.

2. Umstandswörter des Ortes (տեղական):

Ո՞ւր *ur* wo? wo,
ուստի՞ *ussdi* von woher,
քովնտի *khowndi* von der Seite, seitwärts.

3. Umstandswörter der Zeit (*ժամանակական*):

**Միշտ** *mischd* immer,
**երբ** *jerp* als, wann, zur Zeit als,
**ամէն ի ժիր** *amên i žir* immer, fortwährend,
**յառաջ** *jarratsch* früher, in früherer Zeit,
**ուշ** *usch* spät,
**դեռ** *terr* noch, neuerdings.

## Fragende, verneinende Umstandswörter und andere.

(*Հարցական, Բացասական եւ այլն*)

**Միթէ** *mithe* } ob, ist es möglich?
**արդեօք** *arteokh* } ist es etwa, daß . . .?
**այո** *ajo* ja, es ist so,
**մի** *mi* nicht,
**ոչ** (*չ*) *uotsch* nicht,
**քաւ** *khau* nein, nicht, weg, pfui,

Von der Aufzählung der übrigen Unterabtheilungen der Umstandswörter müssen wir hier wegen Raummangel absehen und sei derjenige, welcher diesen Gegenstand weiter verfolgen will, auf Ajděn II. Theil, Seite 110 u. f. verwiesen. Von den eigentlichen Umstandswörtern seien nur nachfolgende angeführt:
**Վերէն** *weren* von oben, **վարէն** *waren* von unten, **դրսէն**, **դրսանց** *trsen, trsants* von außen,
**առջեւէն** *arrtschewên* vorweg, von vorn,
**ետք** *jedkh* nachher, **ետքէն** *jedkhen* nachher,
**խիստ** *chissd* sehr, **պինտ** *bind* sehr,
**շուտ**, **շուտ մը** *schud, schud mê* schnell,
**սանկ**, **ասանկ**, **ատանկ**, **անանկ** so, auf diese Weise,
**սանկ նանկ** *sang nang* so oder so,
**շատ մը** *schad mê*, **խել մը** *chel mê* viel, sehr stark, **վաղ** *wagh* morgen.

## Uebung.

Հայրդ ո՞ւր է։ Տունն է։ Ե՞րբ կ'ուզէք ղրկել։ Վաղը կ'ուզեմ ղրկել։ Ե՞րբ կ'ուզէք դուրս ելլել։ Հիմա ելլել կ'ուզեմ։ Հոս մնալ կ'ուզէ՞ք։ Ձենէ ուշ դուրս կ'ելլեմ։ Ատոնք ձեր ապասաւորնե՞րն են։ Այո, անոնք են։ Տիկին այս տղուն մա՞յրն էք։ Այո, եմ։ Երկայն ատե՞ն է որ եկաք։ Տասն եւ հինգ օրէ ի վեր։ Ամսուն քանի՞ն է։ Գիրքս կարդալու պէս, կը պահեմ։ Ինչո՞ւ միշտ անանկ բաներ կ'ուզես իզմէ, որոնք չեմ կրնար ընել։ Շատ կամաց կը խօսէր որ չըլլայ թէ մտիկ ընեն։ Ամէն բան չափով գործածելու է։ Աս գրուածքս զար-

մանալի կերպով գրուած է։ Ձեր բարեկամը հոն մնալ կ՚ուզէ՞։ Արժանապէս վարձքն առաւ։ Աստուած անսահմանս բարի է։ Աս գործք շատ վարպետութեամբ առաջ կը տանի կոր։ Զովութեամբ երթալու համար գիշերը քալեցին։ Հին ատենները ուրիշ կերպով կ՚ապրէին։ Աս մարդը խեղճութեամբ կ՚ապրի։ Կուրօրէն կիրքերուն ետեւէն կ՚երթայ։ Ասոր վրայ խառնաշփոթ բան մը լսեցի։ Նոր հասած է։ Անիկայ անմեղութեամբ լրի։ Աս գիտութեան մէջ շատ խորունկ մտած է։ Ձեր եղբօրը տունը երթալ կ՚ուզէ՞ք։

Հիմա *hima* jetzt,
հոս *hoss* hier, հոն *hon* dort,
տիկին *digin* Madame,
գալ *kal* ankommen,
ատեն *aden* Zeit,
պահել *bahel* schließen,
գործածել *kordsadsel* benützen,
գրուածք *kruadskh*, Plur. des Part. Perf. Pass. von գրել, Werk,
արժանապէս *aržanabêss*, adv., [würdig,
վարձք *wartskh* Lohn,
գործք *kordskh* Angelegenheit,
զովութիւն *zowuthiun* Frische,
ատեն *aden* Zeit,
հին *hin* alt,
խեղճութիւն *chechdschuthiun* [Elend,
կիրք *girkh* Leidenschaft,
խառնաշփոթ *charrnaschpoth*, adv., verwirrt, confus,
անմեղութիւն *anmeghuthiun* Unschuld,
խորունկ *chorung*, adv., tief,
հմտացած *hmdathsats* erfahren, gelehrt,
տանիլ *danil* tragen, führen,
մնալ *mnal* bleiben,
ուշ *usch* spät,
սպասաւոր *ssbassawor* Diener,
երկայն *jergajn* lange,
ի վեր *i wer* über,
կամաց *gamaths* leise,
չափով *thschaphow* mäßig,
կերպ *gerb* Art, Weise,
զարմանալի *zarmanali* bewunderungswürdig,
անսահմանս *anssahmanss* unendlich,
վարպետութիւն *warbeduthiun* Geschicklichkeit,
քալել *khalel* gehen,
ապրիլ *abril* leben,
ուրիշ *urisch* anderer,
կուրօրէն *gurorên* blindlings,
ետեւէն *jedewên* nach,
վրայ *wraj* über,
լսել *lssel* hören,
հասած *hassads* angekommen,
գիտութիւն *kiduthiun* Wissenschaft.

## Uebung.

Mit (վրայ) seiner Aufführung (ընթացք) unzufrieden (դժգոհիլ Part. Präs.), schrieb er ihm trocken (Instrum. von ցամաքութիւն). Was ist das (übers. das was ist), ihr ärgert euch (բարկանալ mit կոր). Die Anderen folgen (երթալ) den ihnen vorher (առջեւ) gezogenen (ziehen քաշել) Weg (ճամբայ hier ճամբէ—ն) beständig (շարունակ). Sie leben verweichlicht (Subst. մեղկութիւն). Jeden Tag arbeiten (աշխատիլ) wir fleißig (փութով). Deine

Schwester (քոյր) spricht sehr gut armenisch. Sie sprach gut. Welcher Knabe kaufte diese Bücher, und wem machte er (ըրաւ) damit (Gen. von որ) ein Geschenk (ընծայ). Es ist eine Stunde, daß ich esse (ուտել) und ich kann nicht satt werden (կշտանալ). Er hat den ganzen Tag fleißig geschrieben.

---

# XVIII. Lection.

## Die Präposition (Նախադրութիւն).

Wiederhole I. Theil, Lection 33—35.

Neu sind entweder in Form oder in Anwendung:

Զքեզ տեսնելու համար um dich zu sehen, քեզի համար wegen dir,
սովորութեան դէմ gegen die Gewohnheit, ինծի դէմ gegen mich,
բերդին մօտ nahe dem Schlosse,
առանց քեզի ohne dir, առանց վկայի ohne Zeugen,
մինչեւ bis, մինչեւ մեզի եկաւ er kam bis zu uns,
դէպ ի քաղաք gegen die Stadt,
քեզմէ ի զատ oder քեզմէ զատ außer dir,
տունէն դուրս außerhalb des Hauses,
մանկութենէ ի վեր seit der Jugend, von Jugend auf,
մէջերնիս unter uns,
ամառուան ատեն während des Sommers, im Sommer,
կերակրէն ետեւ nach dem Mahle,
պատերազմէն առաջ vor dem Kriege,
մարդու մը հետ mit einem Manne,
այս գործքիս վրայօք betreffs dieser Angelegenheit,
իր մեծ ծառայութեանց նայելով in Anbetracht seiner großen Dienste,
քու խրատիդ պէս deinem Rathe gemäß,
սովորութեան համաձայն nach der Gewohnheit,
քիչ մը ստըկի ձեռքով vermittelst einer Summe Geldes,
իր առջեւը vor ihm, տան առջեւ vor dem Hause,
ըստ բնութեան gemäß der Natur,
լեռան անդին jenseits des Berges,
լեռան ասդին diesseits des Berges,
ինձմէ ետքը nach mir, վրան über, տակն unten,
բաց ի կիրակիէն ausgenommen den Sonntag,
քաղքէն հեռու weit von der Stadt.

## Uebung.

Իւր բարեկամին քով կ՚ըլլայ։ Հաց գնելու համար ստակ ունի՞ք։ Ունիմ։ Ասիկայ մինչեւ աս ժամս չէր տեսնուէր։ Ձեր օգտին վրայօք հետս խօսեցաւ։ Քու բարեկամիդ հետ եկայ։ Ասիկայ իրիկուան ժամը չորսին դէմ պատահեցաւ։ Իւր հօրը քով կ՚երթայ։ Ձեր եղբօրը տունը երթալ կ՚ուզէ՞ք զանի տեսնելու համար։ Ժամանակ չունիմ հոն երթալ զանի տեսնելու համար։ Ամէնն ալ իր առջեւն ելան։ Աս հանդէսիս մէջ շատ մարդ կար։ Անիկայ քեզմէ առաջ տեսայ։ Հօրեղբօրս տունը գացի՞ք։ Իմ տունս իրենին քովն է։ Մարդուն տունը կ՚ըլլաս։ Տիբերիոս Օգոստոսէն ետեւ ինքնակալ եղաւ։ Գիշերուան առթով փախաւ։ Օդին խստութեան չնայելով գնաց։ Գրքերուս մէջը թուղթ մը գտայ։ Ապակիներուն մէկալ կողմանէ լոյսը կ՚երեւայ։ Իր չորս կողմը շարուեցան։ Վրան ունեցած կարծիքէս վեր է։ Բանակը քաղքին մօտերը կեցաւ։ Իսկ ինքը ինչպէս որ կ՚ուզէ անանկ ընէ։ Ամէն բան ձեր կարծեացը համաձայն կատարուեցաւ։ Բերնին մէջ բան մը ունի։ Ծառին ետեւը նստած է։ Անկողնին վրան ալ տակն ալ չէ։ Ասիկայ հօրմէն ծածուկ ըրաւ։ Արեւուն համեմատութեամբը երկիրս շատ պզտիկ է։ Իրենց ծնողացմէ հեռու են։ Թագաւորին ծախքովը նորէն պիտի շինել տան։ Ալ աս դաստիարակս տղոցս քովը չէ։ Սովորութեանը դէմ շատ կանուխ դուրս ելաւ։ Բոլոր կենացը մէջ ամենեւին սուտ չզրուցեց։ Աս ձին իրեն հազարէն վար չեմ տար։ Աղքատներուն ողորմած է։ Մեր երկուքին մէկը նստած էր։

Ստակ, ստըկի *ssdag* Geld,
իրիկուն, իրիկուան *irigun* Abend,
կար von կայ es gibt,
հօրեղբայր *horeghpajr* Vatersbruder, Onkel,
ինքնակալ *inkhnagal* Alleinherrscher, Kaiser,
փախչել *phachtschel* fliehen,
խստութիւն *chĕssduthiun* Strenge,
ապակի *abagi* Glas,
երեւիլ *jerewil* sich zeigen, erscheinen,
շարել *scharel* sich gruppieren, anreihen, stellen,
բանակ *panag* Lager, Feld,
բերան, բերնի *peran* Mund,
դուռ *turr* Thüre,
կեանք, կենաց *geankh* Leben,
զրուցել *zruthsel* sprechen,
աղքատ, ի *aghkhad* arm,
երկուքին, siehe Zahlwörter,
օգուտ, օգտի *okud* Vortheil, Gewinn,
պատահիլ *badahil* ereignen,
հանդէս, ի *hantêss* Fest,
գացիք Perf. von երթալ gehen,
գիշեր *kischer* Nacht,
առիթ, առթի *arrith* Anlaß,
օդ, ի *ôt* Luft, Wetter,
գտնել *kdnêl* finden,
կողմ(ն) *goghm(n)* Seite,
լոյս *luiss* Licht, Tageslicht, Tag,
կարծիք *gardsikh* Idee, Meinung,

իսկ *issg*, Conj., denn, nun, Präp. was betrifft (quant à, toccante, inquanto),
ընել *ĕnel* machen,
բան (in der Schriftspr. Wort) Ding, Sache,
կատարել *gadarel* machen, vollenden,
երկիր *jergir* Erde,
նստած von նստիլ *nĕssdil* sich setzen,
ալ — ալ ոչ weder — noch,
ընել *ĕnel* thun, ըրաւ er that,
ծածուկ *dsadsug* ohne Wissen von, geheim,
ծնող, ի, աց *dsnogh* Erzeuger, Plural, Eltern,
թագաւոր, ի *thakawor* König,
շինել *schinel* machen, construieren,
դաստիարակ *tassdiarag* Lehrer,
տղայ *dghaj* Kind,
կանուխ, *ganuch*, adv., frühe,
կեալ *geal* leben, sein,
նէ, über diese Conjunction siehe XIX. Section,
համաձայն *hamatsajn* in Übereinstimmung mit, conform,
ծառ, ի, *dsarr* Baum,
անկողին, դնի *angoghin* Bett,
արեւ, ու *arew* Sonne,
համեմատութիւն *hamemaduthiun* Vergleich, Verhältniß,
պզտիկ *bezdig* klein,
հեռու *hêrrû* ferne,
ծախք, ի *dsachkh* Kosten,
նոր *nor* neu,
ալ չէ er ist nicht mehr,
սովորութիւն *ssoworuthiun* Gewohnheit, Sitte,
բոլոր *polor* ganz,
ամենեւին *amenewin* ganz u. gar,
սուտ *ssud* falsch, unwahr,
տար von տալ geben,
ողորմած *oghormads* mildthätig.

## Uebung.

Hat ihr Bruder ein Messer (դանակ), um (համար) damit sein Brot zu schneiden? In Anbetracht (նայելով) der Umstände (պարագան) verurtheilten sie ihn nicht (verurtheilen դատապարտել). Ich setzte mich ihm gegenüber (իրեն դիմաց) nieder. Dieses Ereigniß (պատահմունք) ist uns (մեզի) noch (դեռ) sehr nahe (մօտ). Ich diene (ծառայել) dir selbst (ալ) mit Gefahr (վտանգով) meines Lebens (übers. meines Lebens Gefahr auch dir ich diene). Diese Pferde (ձիանք) sind für (համար) den Stall (ախոռ, ի) des Königs (bestimmt). Er legte sich auf (վրայ) ein ausgezeichnetes (փառաւոր) Bett schlafen (պառկիլ Imperfectum). Ich erwarte (սպասել) dich zwischen fünf und sechs Uhr (ժամ). Er will wegen deines Lehrers kein Brot holen. Die Kugel (գնդակ) ist quer durch (մէջէն) die Mauer (պատ) gegangen (անցաւ). Ich habe den Degen (սուր) durch seinen Körper (bloßer Instrumental mit dem Suffixe ն, Körper: մարմին) gestossen. Er hütet sich mir zu antworten. Heute speisen (ճաշել) wir außerhalb (դուրս mit dem Ablativ) des Hauses. Die Kirche (եկեղեցին) ist außerhalb der Stadt. Ich liebe (սիրել) nicht, mit (հետ) diesem Manne zu thun (գործ) zu haben (ունենալ), denn (քանզի) er zieht die Sachen immer in die Länge (երկընցնել *jergĕnthsnel*).

---

# XIX. Lection.

## Conjunctionen (Շաղկապ).

Եւ, ու und, նաեւ noch, այլ եւ und auch,
դուն ալ չիմացար auch du hast nicht gefühlt,
թէ wenn, auch, եթէ, թէ որ, եթէ որ, թէ bedeutet auch daß,
որ auf daß, damit, um zu,
կամ oder,
թէպէտ եւ, թէ եւ wenn auch, obgleich, obschon,
վասն զի da, weil, որովհետեւ desgleichen,
որպէս զի um zu, damit,
բայց aber, jedoch, բայց միայն es sei denn, daß,
հապա sondern, sonst,
թշնամեացն անգամ յարգելի selbst den Feinden ehrfurchtgebietend,
թէ ոչ wenn nicht, auch թէ,
այսինքն das ist, das heißt,
ահա da, hier,
ուրեմն, ուստի also, nun denn,
ինչպէս որ so wie,
ի վեր seit, seitdem,
երբ որ als, zur Zeit als,
ատեն zur Zeit als, als,
ոչ ալ nichts mehr als,
ինչու որ weil, da, ինչո՞ւ warum?
դնենք որ gesetzt den Fall, daß,
ենթադրելով որ vorausgesetzt, daß,
թէպէտ obgleich, obschon,
թէ — թէ entweder oder, sei es das — sei es das,
անանկ որ so, daß, derart, daß,
վերջապէս nun endlich, zum Schlusse.

Նէ, dem Conjunctiv eines Verbums nachgesetzt, hat die Bedeutung von wenn und bereitet auf die Folgerung des Hauptsatzes, welcher keine Conjunction mehr enthält, vor.

### Uebung.

Յուսամ որ բան չէ: Յուսանք որ հետեւանք մը չունենար: Գրքատան բալլիքը գտնայինք նէ, շատ զուարճալի գրքեր կ'ունենայինք: Տենդ չունենայիր նէ, ելլելու ազատութիւնը կ'ունենայիր*): Բարեկամ չունենայի նէ, քիչ հաճու-

*) In diesem Falle steht ausnahmsweise auch bei ունենալ die Vorsilbe կը, siehe XIV. Lection.

թիւն կ'ունենայի։ փութաջան ըլլայիք նէ, շատ քիչ ցաւ կ'ունենայիք։ Թէ որ գինի ունենայի, գարեջրոյ հարկաւորութիւնը չէի ունենար։ Կ'ուզէք սպասաւորին ըսել որ կրակը վառէ։ Կ'ուզեմ ըսել որ վառէ։ Թէպէտ այս կինը միւսներէն աւելի համբերութիւն կը ցուցընէ, բայց եւ այնպէս անոնցմէ քիչ վշտացեալ չէ։ Այս կինն արտասուք թափելու արուեստն ունի, նաեւ երբ ամենէն քիչ վշտացեալ է։ Կ'ուզէ որ համբերութիւն ունենամ։ Կը բաղձայ որ իրեն տեսի երթալու բարութիւնն ունենաք։ Չէի կարծեր որ անչափ գիրք ունենար։ Կը կարծէ որ իւր գիրքը մենք ունենանք։ Թղթաբերին երթալէդ ետեւ մաքսատուն գնա։ Աղէկ վարուելու ըլլար նէ, աւելի համարում կ'ունենար։ Իր ետեւէն երթայիր նէ, շատ անխոհեմ եղած կ'ըլլայիր։ Անոնց տունը երթալէն ետեւ բաժնուեցանք գացինք։

Յուսալ *jussal* hoffen,
գրքատուն *kerkhadun* Bibliothek,
գտնել, *kdeknêl* finden,
տենդ, ի *dent* Fieber,
քիչ *khitsch* wenig,
ցաւ *thsau* Schmerz,
գարեջուր, ջրի *karetschur* Bier (eigentlich „Gerstenwasser"),
վառել *warel* zünden,
համբերութիւն *hamperuthiun* Entschlossenheit, Festigkeit,
վշտացեալ *weschdathsial* betrübt,
թափել *thaphel* vergießen,
բաղձալ *paghtsal* wünschen,
կարծել *gardsel* glauben,
թղթաբեր *theghthaper* Post,
վարուիլ *waruil* sich verhalten,
համարում *hamarum* Achtung,
համարում ունենալ Achtung haben,
հետեւանք *hedewankh* Folge,
բալլիք *pallikh* Schlüssel,
զուարճալի *zwardschali* unterhaltend,
ազատութիւն *azaduthiun* Freiheit,
հաճութիւն *hadschuthiun* Vergnügen,
փութաջան *phuthatschan* arbeitsam, emsig,
հարկաւորութիւն *hargaworuthiun* Nothwendigkeit, Bedürfniß,
միւս *miuss* andere,
ցուցընել *thsuthsnel* zeigen,
թէպէտ *thêbêd* obgleich,
արտասուք, սուաց *ardassukh* Thränen,
արուեստ, ի *aruessd* Kunst,
բարութիւն *paruthiun* Güte,
մաքսատուն *makhssadun* Zollamthaus,
անխոհեմ *anchohem* unklug,
բաժնուիլ *pažnuil* sich trennen.

## Uebung.

Wenn ich Euch jetzt solche Fragen stellen würde (հարցումն տալ Imperf. Conj.), wie (պէս) die Fragen, welche ich an Euch manchmal (երբեմն) in (մէջ) den ersten Lectionen (դաս) richtete (ընել), was würdet Ihr antworten (պատասխանել)? Jetzt können wir uns fast (գրեթէ) mit Leichtigkeit (դիւրութիւն) im Armenischen unter-

halten (խօսակցիլ). Wir wären undankbar (ապերախտ), wenn wir eine so (այսպիսի) schöne Gelegenheit (պատեհութիւն) verlieren würden, ohne (առանց) Ihnen unsere lebhafteste (ամենէն եռանդուն) Dankbarkeit (շնորհակալութիւն) zu bezeugen (յայտնել). Der Hund (շուն) ist der Freund und Begleiter (ընկեր) des Menschen. Italien (Իտալիա) ist der Garten von Europa (Եւրոպիոյ). Von Frankreich (Գաղղիայէ) zurückgekehrt (դառնալ Gen. des Infinitivs), werde ich nach Deutschland gehen. Nachdem (որովհետեւ) er sich beklagt (գանգատիլ), so hat (wurde) man ihm dazu Ursache (պատճառ auch տեղի) gegeben. Gebt ihm keinen Grund (= Ursache) zum Klagen. Dies ist das schlechteste (գէշ) von allen Pferden, die wir gehabt haben.

## Verzeichniß der unregelmäßigen Verben*) im Neu-Armenischen.

Բերել tragen, führen (Pass. բերուիլ).

Կատ. Բերի, բերիր, բերաւ, բերինք, բերիք, բերին:

Հրա. Բեր, բերէք: Ընդ. բերող: Անց. բերած, բերեր:

Ըսել sagen (Pass. ըսուիլ).

Կատ. Ըսի, ըսիր, ըսաւ, ըսինք, ըսիք, ըսին:

Հրա. Ըսէ, ըսէք: Ընդ. ըսող: Անց. ըսած, ըսեր:

Ընել thun (hat kein Pass.).

Կատ. Ըրի, ըրիր, ըրաւ, ըրինք, ըրիք, ըրին:

Հրա. Ըրէ, ըրէք: Ընդ. ընող: Անց. ըրած, ըրեր:

Դնել stellen (Pass. դրուիլ).

Կատ. Դրի, դրիր, դրաւ, դրինք, դրիք, դրին:

Հրա. Դիր, դրէք: Ընդ. դնող: Անց. դրած, դրեր:

Առնուլ, առնել nehmen, erhalten (Pass. առնուիլ).

Կատ. Առի, առիր, առաւ, առինք, առիք, առին:

Հրա. Առ, առէք: Ընդ. առնող: Անց. առած, առեր:

Զարնել schlagen (Pass. զարնուիլ).

Կատ. Զարկի, զարկիր, զարկաւ, զարկինք u. s. w.

Հրա. Զարկ, զարկէք: Ընդ. զարնող: Անց. զարկած, զարկեր:

Տանել tragen, führen (Pass. տարուիլ).

Կատ. Տարի, տարիր, տարաւ, տարինք u. s. w.

Հրա. Տար, տարէք: Ընդ. տանող: Անց. տարած, տարեր:

---

*) Ajdĕn II., Seite 66.

Բանալ öffnen (Pass. բացուիլ).

Կատ. Բացի, բացիր, բացաւ, բացինք u. s. w.
Հրա. Բաց, բացէք: Ընդ. բացող: Անց. բացած, բացեր:

Նստիլ sich setzen.

Կատ. Նստայ, նստար, նստաւ, նստանք, նստաք, նստան:
Հրա. Նիստ, նստէք: Ընդ. նստող: Անց. նստած, նստեր:

Իյնալ fallen.

Կատ. Ինկայ, ինկար, ինկաւ, ինկանք, ինկաք, ինկան:
Հրա. Ինկիր, ինկէք: Ընդ. ինկող oder իյնող: Անց. ինկած, ինկեր:

Տալ geben (Pass. տրուիլ).

Կատ. Տուի, տուիր, տուաւ, տուինք u. s. w.
Հրա. Տուր, տուէք: Ընդ. տուող: Անց. տուած, տուեր:

Գալ kommen.

Կատ. Եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան:
Հրա. Եկուր (եկո՛), եկէք: Ընդ. եկող: Անց. եկած, եկեր:

Երթալ gehen.

Կատ. Գնացի, գնացիր, գնաց, գնացինք u. s. w.
Հրա. Գնա, գնացէք: Ընդ. գնացող: Անց. գնացած, գնացեր:

Ուտել essen (Pass. ուտուիլ).

Կատ. Կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան:
Հրա. Կեր, կերէք: Ընդ. կերող (ուտող): Անց. կերած, կերեր:

Լալ weinen.

Կատ. Լացի, լացիր, լացաւ, լացինք u. s. w.
Հրա. Լաց, լացէք: Ընդ. լացող: Անց. լացած, լացեր:



# Neu-Armenische Lesestücke.

# Armenische Zeitungsnotizen.*)

## Լեռնային դպրոցներ:

Այս դպրոցները “Լեռնային„ կը կոչուին՝ վասն զի հիմնուած են կաւկասեան բարձրագաւառներու վրայ բնակող լեռնականաց համար: Այս դպրոցները մեծ կարեւորութիւն ունին այն վայրագ եւ այլեւայլ մանր ցեղերու բաժնուած լեռնորդեայքը կրթելու եւ նոցա մէջ ռուսական քաղաքակրթութիւնը տարածելու համար:

Լեռնային դպրոցներուն ուսմանց ծրագիրն ըստ ինքեան նոյն է երկդասարանեան գիւղային դպրոցներու ծրագրին հետ: Ասոնցմէ ոմանք 3 դասարան ունին եւ ոմանք 2, որոնց կից հաստատուած են նաեւ պատրաստողական բաժանմունք: Բաց ի դպրոցական ծրագրէն, զոր ամէն աշակերտ պարտաւոր է անցնելու, կ՛աւանդուին նաեւ հետեւեալ առարկաները, որոնց ուսումն կամաւոր է կամ՝ ազատ. Երգեցողութիւն, պարտիզպանութիւն, հիւսնութիւն եւայլն, ըստ պիտոյից տեղւոյն ուր հիմնուած է դպրոցը:

## Ի Պուլկարիա:

Անցեալ տարի հրացանի բռնուած Փանիցա հաղարապետին այրին, Պ. Սթամպուլովի բարեկամական տնօրինութեամբ, ամուսնացաւ Սոֆիայի Ազգային պուլկարական Պանքային տնօրէն Պ. Թէնէվի հետ, որ նմանապէս այրի է: Պսակի օրհնութիւնը նախորդ կիւրակի օր տեղի ունեցաւ: Թղթակից մը կը հեռագրէ թէ “Ամէն ոք կը պախարակէ տիկին Փանիցայի ընթացքն„:

— Ադրիանուպոլսոյ ռուսական հիւպատոսարանի թարգման Պ. Քովանքի Փիլիպպէ գացեր է Պուլկարիոյ մէջ Փատլեւաքիի հետքը փնտռելու:

---

*) Die hier gegebenen Lesestücke sind der in Constantinopel erscheinenden Zeitung Արեւելք entnommen und durchwegs im vulgären Constantinopler Dialecte verfaßt; das am Schlusse beigegebene Neu-Armenisch-Deutsche Wörterbuch enthält alle in diesen Lesestücken vorkommenden Wörter. Weitere Aufklärungen finden sich in der armenischen Einleitung.

## Պ. Մաք Քինլի:

Այս հռչակաւոր ամերիկացի երեսփոխան ի մօտոյ Եւրոպա պիտի գայ, գլխաւորապէս Պիզմարք իշխանին հետ տեսակցելու նպատակաւ: —(!)

## Մ՚անէր:

Ֆրանսացի աշխարհահռչակ պատկերահան Մէսոնիէ մեռաւ:

— Նուազ կարեւոր բայց աւելի աղմկայոյզ մարդ մ՚ալ մեռաւ, անգլիացի երեսփոխան Չ. Պրատլօ, որ իւր սկեպտական գաղափարներով, չէր ուզած Աստուծոյ անուան եւ Ս. Գրոց վրայ երդում ընել՝ երեսփոխան ընտրուելուն առթիւ: Ի բաց առեալ իւր կրօնական գաղափարներ, իւր քաղաքական-արմատական գաղափարներով օգտակար եղած էր գործաւոր դասուն: Իւր մահուամբ Նորթէմփթընի մէջ ազատական-կլատսթոնեան աթոռ մը բաց կը մնայ, եւ կը մնայ տեսնել թէ կառավարական կուսակցութիւնը պիտի փորձէ՞ կորզել այս աթոռ:

— Աւստրիոյ-Հունգարիոյ ողբացեալ գահաժառանգին Ռուտոլֆ արհիդքսին մահուան տարեդարձին առթիւ, հոգեհանգստեան պաշտօնք կատարեցան Աւստրիոյ-Հունգարիոյ ամէն կողմերն Յունուար 31ին:

## Վսեմ. Ջիհնի փաշա:

Էվգաֆի նախարար Վսեմ. Ջիհնի փաշա, որ մէկ քանի օրէ ի վեր հիւանդ էր, բոլորովին ապաքինած ըլլալով, երէկ ներկայ գտնուեցաւ Նախարարաց Խորհրդոյ Նստին:

Ն. Վսեմութիւն երէկ, իւր պաշտօնատեղին երթալէ առաջ, կայս. պալատ գնաց եւ շնորհակալութիւն յայտնեց այն հոգածութեան համար զոր Վ. Եհ. Սուլթանը ցոյց տուած էր իւր հիւանդութեան պահուն:

## Էօժէն Ոսկար իշխանը:

Անցեալ գիշեր ի կայս. պալատ տրուած հացկերոյթի պահուն Վ. Եհ. Սուլթան Իմթիազ պատուանշանի ոսկի եւ արծաթ շքադրամները նուիրած է Շուէտ-Նորվեկիոյ թագաւորին որդի Էօժէն Ոսկար իշխանին, ինչպէս նաեւ գեղարուեստից շքադրամներ Ֆրէյա մարտանաւուն զինուորական նուագածուաց:

— Պարսկական դեսպան Միրզա Մոհսին խան շաբաթ իրիկուն դեսպանատան մէջ շքեղ հացկերոյթ մը տուաւ ի

պատիւ իշխանին։ Հացկերոյթին ներկայ էին նաեւ Արտաքին գործոց նախարարութեան մէքթուպճի Միւնիր պէյ, կայս. Թիկնապահ Ահմէտ Ալի փաշա, Խարիճիյէի արարողապետի օգնական Ղալիպ պէյ, ռուսական, շուէտական, հելլէնական ու սերպիական դեսպանք, գերմանական դեսպանական գործակատարն եւ ճաբոնական մարտանաւերու հրամանատարք։ Սեղանն սկսաւ ժամ 3ին եւ աւարտեցաւ ժամ 6ին։ Սեղանէն յետոյ ցայգահանդէս մը տեղի ունեցաւ որ տեւեց մինչեւ ժամ 8։

Այս իրիկուն եւս աւստրիական դեսպանատան մէջ շքեղ հացկերոյթ մը պիտի տրուի ի պատիւ իշխանին։ Սեղանին հրաւիրուած են նաեւ նախարարք ոմանք։

## Ի Կայս. Պալատ:

Բարձր Մեծ-Եպարքոսը շաբաթ օրը կայս. պալատ գնաց եւ Վ. Եհ. Սուլթանի հրամաններն ստանալով, Բ. Դուռը դարձաւ։

Ոստիկանութեան նախարար Նազըմ պէյ եւ Քաղաքապետ Րըտվան պէյ երէկ յաջորդաբար կայս. պալատ գնացին եւ ստացան Վ. Եհ. Սուլթանի հրամանները։

## Արկած Ռուսիոյ կայսրորդւոյն:

Չարին երկրորդ որդի Կէորկիոյ Ալեքսանդրովիչ, որ իւր մեծ եղբօր հետ աշխարհի շուրջը պտոյտ մը կ'ընէ եւ ռուս նաւատորմին մէջ ենթասպայ է, յանկարծ ծանրապէս արկածեցաւ այն մեծ մարտանաւուն մէջ ուր կը գտնուէր՝ կայմէ մը վար իյնալով։ Չարեւիչն ի Կալկաթա իւր ուղղեւորութիւնը փութով վերջացուց՝ իւր եղբօր քով երթալու համար։

## Քիւրտ եւ արաբ հեծելազօրք:

Վ. Եհ. Սուլթանն Հրամայած է Էրթողրուլ անուանել հեծելազօրաց այն նոր գունդերն որք պիտի կազմուին քիւրտ եւ արաբ ցեղերէ։ Այս հեծելազօրքեր չորս գունդերէ պիտի բաղկանան։

## Մանր դրամ:

Նախարարաց Խորհուրդը նկատողութեան առնելով Ելեւմտական նախարարութեան մէկ տեղեկագիրն, որ կ'առաջարկէր մանր դրամներու նուազութեան պատճառաւ՝ 1,250.000 ղրշի մանր դրամներ պատրաստել, ընդունելի դատեց եւ տեղեկագիր մը պատրաստելով, մատոյց Վ. Եհ. Սուլթանին։

## Հասան Ալի էֆէնտի:

Հեռագրական եւ Թղթատարական վերատեսուչ Հասան Ալի էֆէնտի մէկ քանի օրէ ի վեր Թոքատապէ կը տառապի. Վեհ. Սուլթան իմանալով, Թիկնապահ մը ղրկեց Ն. Վսեմութեան ապարանքն եւ որպիսութիւնը հարցնել տուաւ։ Վեհ. Սուլթանին հրամանաւ՝ բժշկական տեղեկագիր մը մատուցուեցաւ Ն. Վեհափառութեան, ի մասին առողջական վիճակին Հասան Ալի էֆէնտիի։

## Ահմէտ Ալի փաշա:

Գերմանիոյ Վիլհէլմ կայսրն իւր լուսանկարը նուիրած է կայս. Թիկնապահ Ահմէտ Ալի փաշայի, ի վարձատրութիւն այն ծառայութեանց զորս մատուցած էր Միտիլլի առջեւ խրած գերմանական մարտանաւու ազատման համար։ Լուսանկարին վրայ կը գտնուի Վիլհէլմ կայսեր ստորագրութիւնը։

## Փոքր Ասիա:

Տպագրական Տեսչութիւնն երեկի Թուրք լրագրաց միջոցաւ կը ծանուցանէ թէ Քարբերդէն եւ Տրապիզոնէն 18 Յունուար թուականաւ եկած հեռագրերու համաձայն, այդ նահանգաց մէջ կատարեալ անդորրութիւն կը տիրէ։

Նոյն Տեսչութիւնն այս աւուր Թուրք լրագրաց միջոցաւ կը ծանուցանէ թէ Բաղէշէն, Քարբերդէն, Էնկիւրիէն եւ Տրապիզոնէն եկած հեռագրերու համաձայն, այդ նահանգաց մէջ, շնորհիւ Վեհ. Սուլթանին, որ եւ է դէպք չէ պատահած եւ թէ կատարեալ անդորրութիւն կը տիրէ։

## Փոխառութիւն:

Ելեւմտական Նախարարութիւնը բանակցութեան մէջ է Օսմ. կայս. Պանքային հետ՝ 60.000 ոսկւոյ փոխառութեան մը կնքման համար։

## Համազգային Անկելանոց:

Համազգային Անկելանոցի յանձնաժողովն շաբաթ օրը Ելեւմտական պաշտօնատան մէջ ի նիստ գումարեցաւ ընդ նախագահութեամբ Նախարար Վսեմ. Յակոբ բաշայի եւ խորհրդակցութիւնք տեւեցին մինչեւ իրիկուան ժամ։ Յանձնաժողովն որոշեց ի մօտոյ բանալ այն ցուցահանդէսն որ պիտի

կազմուի Վեհ. Սուլթանին կողմանէ շնորհեալ թանկագին նիւթերէն։ Այս ցուցահանդէս պիտի կազմակերպուի Թէփէ Պաշիի թաղապետական թատրոնի սրահին մէջ։

## Հերքում:

Մանասդըրի գաւառական թերթն իբրեւ անհիմն եւ երեւակայական կը հերքէ Պելկրատի Օճէ+ լրագրոյ Նոյեմբեր 13ի թերթին մէջ հրատարակեալ այն լուրն թէ անցեալ Հոկտեմբեր 25ին երկու հարիւրի չափ աւազակներ Կէպրէ գաւառակի Գուսուրաչ գիւղին վրայ յարձակելով տուները կործաներ, ամբողջ գիւղը աւարի տուեր, 250ի չափ կովեր, 500 ոչխարներ ու 600 այծեր յափշտակեր, երեք մարդ ու երկու կին սպաններ եւ եօթը մարդ ալ գերի տարեր են։ Նոյնպէս նոյն ամսոյ 28ին ալ Մալիսոր կոչուած ցեղին մարդիկ նոյն գաւառակի Բոսաւէ գիւղին վրայ յարձակելով բազմաթիւ կովեր ու ոչխարներ յափշտակեր են եւ յետոյ Լահիճան գիւղին վրայ յարձակելով 40 տուներ այրեր 2000ի մօտ կով ու ոչխար յափշտակելով, գիւղն աւարի տուեր են։

Մանասթըրի թերթը կ'ըսէ թէ այդ գիւղերն ո՛չ այդչափ արջառներ ունին եւ ո՛չ ալ զայն արածելու համար բաւական ընդարձակ տեղ եւ թէ այդ դէպքեր բոլորովին ստայօդ ըլլալով, նահանգին ամէն կողմը կատարեալ անդորրութիւնը կը տիրէ։

## Քոխի Մէթոտն ի Թուրքիա:

Կայս. բժշկական ընկերութեան վերջին նստին մէջ Տոքթ. Քամպուրօղլու ծանոյց ժողովլին թէ Բերայի գերմանական հիւանդանոցին մէջ քոխեան դրութեամբ դարմանումն սկսած է գործադրուիլ պտուցախտային վէրքէ (lupus) եւ արտաքին հիւծախտէ բռնուած հիւանդներու վրայ։ Այն բժիշկներ որք կը փափագին ներկայ գտնուիլ այս փորձերուն, կրնան ներկայանալ հիւանդանոցն ուր սիրով պիտի ընդունուին։ Վերոյիշեալ գումարման մէջ որոշուած է նաեւ որ առ այժմ մայրաքաղաքիս զանազան հիւանդանոցներու մէջ կատարուած դարմանմանց վրայ միայն զեկոյցներ ըլլան բժշկական ժողովոյն մէջ։ Օտար քաղաքաց մէջ հրատարակուած ուսումնասիրութիւնք ապագային մէջ պիտի քննուին։

* * *

Տոքթ. Ֆօն Տիւրինկն գերմանական եւ ֆերէմիտ հիւանդանոցներուն մէջ սկսած է Քոխեան պատուաստ գործածել կուրծքի, ոսկերաց եւ մորթի հիւանդութեամբ տառապողներուն վրայ։

## Ի Հարաւային Ամերիկա:

Քիլիի Հանրապետութեան նախագահ Պ. Պալմաչէտայի եւ հակառակորդ տարրին միջեւ համաձայնութիւն մը գոյացընելու համար անգլ. դեսպանին միջնորդութիւնն օգուտ չունեցաւ:

Խաղաղական Ովկիանոսի ամերիկեան (Միացեալ Նահանգաց) նաւախումբը Քիլի կ'երթայ, ամերիկացի քաղաքացեաց շահերը պաշտպանելու:

## Դատական քննիչ:

Դատական նախարարութիւնը քննիչ մը կարգելու վրայ է դատարանաց վերաբերեալ խնդիրները քննելու համար: Կ'ըսուի թէ այս պաշտօնին պիտի կոչուի Վճռաբեկ ատենի պատժական ճիւղին նախագահ Հաշիմ պէյ:

## Արուեստից դպրոցներ:

Այս դպրոցներու նպատակն է աշակերտաց մտաւոր զարգացման հետ միասին զանազան արուեստից գործնական ուսմունք աւանդել: Սոքա հիմնուած են գլխաւորաբար անոնց համար որ արուեստից այս կամ այն ճիւղը կ'ընտրեն իրենց մշտական պարապմունք: Այս դպրոցներու բաւական հոգ կը տարուի. եւ աշակերտներն ոչ միայն հասարակ արուեստաւոր՝ այլ եւ կէս կամ փոխ-վարպետ կ'ելլեն: Այսպիսի 8 դպրոց կայ Կաւկասիոյ մէջ:

## Մանկաբարձական վարժարան:

Այս վարժարանն, որ հիմնուած է յատկապէս մանկաբարձ դայեակներ պատրաստելու, 2 տարւոյ դասընթացք ունի: Աշակերտուհիք կ'ընդունուին 16—30 տարեկան: Աշակերտիլ ցանկացողները պէտք է գիտնան՝ 1. Ռուսերէն լեզուի կանոնաւոր ընթերցանութիւն, գրութիւն եւ խօսակցութիւն, 2. Լատիներէն կարդալ, 3. Թուաբանութեան առաջին չորս գործողութիւններն ու կոտորակ եւ 4. Կրօնի սովորական գործածական աղօթքներ:

Իսկ որոնք որ կ'ուզեն “գիւղային մանկաբարձ„ լինել, կարող են առանց քննութեան ընդունուիլ, բայց մէկ տարի աւելի կը մնան վարժարանին մէջ, վերոյիշեալ ծրագրին համեմատ կրթուելու համար:

---

# Bruchstück eines Romanes.

— Իրենց կրած հագուստներէն կ'երեւի թէ ի՞նչ դարու մէջ կ'ապրէին։ Հայր, անշուշտ պարոնուհիներ, կոմսուհիներ կամ տիկին տը Մօնբէռռէի պէս մարգիզուհիներ։

— Չեմ գիտեր, աղջիկս։

— Ա՛հ, ըսաւ Օռօռ, կանգ առնելով մարդու պատկերի մը առջեւ, որ ճոխ եւ փայլելուն հագուստ մը կը կրէր Լուդովիկոս ԺԵ.ի ժամանակին ճաշակով։

— Հայր, ըսաւ, այս գեղեցիկ իշխանը, տեսէ՛ք . . .

— Է՛, ի՞նչ կայ։

— Կարծես թէ դուք էք, այնչափ կը նմանիք իրեն։

— Քեզի այնպէս կու գայ, Օռօռ։ Բայց բաւական է որչափ որ նայեցար այդ հին նկարներուն, շարունակեց ոտքի ելնելով, եկուր, սենեակս երթանք։

— Կ'աղաչեմ, հայր, թողէք որ դեռ դիտեմ, ճշմարիտ հաճոյք 'մը կը զգամ։

Կոմսը չհամարձակեցաւ պնդել։

Աղջիկը քանի մը քայլ յառաջացաւ։

— Ա՛հ, ըսաւ, ահա տիկին մը որ միւսներուն պէս չէ հագուած. գրեթէ հիմակուան պէս զգեստներ ունի, կը տեսնուի արդէն որ այս պատկերը շատ հին չէ։ Ի՛նչ բարի դէմք ունի։ Ի՛նչ քաղցրութիւն կերպարանքին վրայ։ Ի՛նչպէս նայուածքը . . .։ Բայց, հայրիկ, ճիշդ ձեր նայուածքն ու ձեր աչքերն ունի։

Կոմսը կը սկսէր նեղութիւն զգալ։

— Յիմար աղջիկ, ըսաւ, ձայն ծաղրել ձեւացնելով, բոլոր աչքերն ու բոլոր նայուածքները նմանութիւններ չե՞ն ունենար իրարու հետ։ Հիմայ որ տեսար բոլոր այդ պատկերները, եկո՛ւր, եկո՛ւր։

Աղջիկը ետեւը դարձած ատեն Լասեռ.ի կոմսուհւոյն պատկերին առջեւ գտնուեցաւ, որ, ինչպէս գիտենք, քօղով մը ծածկուած էր։

— Հայր, ըսաւ Օռօռ, պատկե՞ր մը կայ հոն։

— Այո, պատասխանեց նա աշխուժիւ։

— Ինչո՞ւ վրան այդպէս սեւ անպիտան լաթ մը կախուած է։

— Ջայն ծածկելու համար։

— Իսկ ինչո՞ւ կը ծածկէք զայն, հայրիկ։

— Որովհետեւ, որովհետեւ... Թոթովեց կոմսը շուարած, եւ չգիտնալով թէ ինչ կը պատասխանէր, որովհետեւ շատ գէշ նկարուած է։

— Հոգ չէ, հայր, կ'ուզեմ այդ պատկերն ալ տեսնել։

— Ոչ։

— Ինչո՞ւ, հայրիկ։

— Պէտք չէ որ տեսնես, չես կրնար տեսնել զայն։

— Շա՞տ տգեղ է։

— Ահռելի՜։

— Ա՜հ... բայց այն ատեն, սիրելի հայրիկ, դուք որ այնչափ լաւ կը հասկնաք նկարչութենէ ինչպէս ամէն տեսակ բանէ, դուք որ այնքան փափկաճաշակ եւ միշտ խղճամիտ էք, ինչո՞ւ գներ էք այդ այլանդակ պատկերը։

— Օռօռ, պատասխանեց կոմսը, անհամբերութեան շարժումով մը զոր չկրցաւ զսպել, կը նեղացնես զիս հարցումներովդ։

— Օ՜հ. հա՜յր իմ, ըսաւ աղջիկը վշտագին ձայնով մը։

— Իրաւ է, խօսք չես հասկնար։ Ի՞նչ կ'ըլլայ քեզի եթէ այս պատկերն սքօղուած ըլլայ։

— Հայր, պատասխանեց աղջիկը մեծ յուզմամբ, բոլոր այս պատկերներն որք կը պաշարեն զիս, կը թուի ինձ թէ փառաւոր ու յարգելի նախահարքն են ընտանեաց մը որուն դուք կը վերաբերիք, որուն ես ալ կը վերաբերիմ...։ Ասիկա ալ գաղափար մըն է որ մտքէս կ'անցնի, հայր իմ։ Եւ հոն ան միւս ծածկուած, սեւ լաթով սքօղուած պատկերը, զոր պէտք չէ որ տեսնեմ, զոր չեմ կրնար տեսնել, այդ պատկերն իրեն կը քաշէ զիս հակառակ իմ կամացս, եւ կ'ուզէի...։

— Կ'ուզէի՞ր։

— Բանալ զայն։

— Կ'արգիլեմ այդ բանը, պատասխանեց կտրուկ ու թրթռուն ձայնով։

Մանկամարդ աղջիկը երկայն հառաչ մը արձակեց։ Յետոյ երկու ձեռները միացուցած կոմսին ուսին դնելով։

— Հայր, ըսաւ փաղաքշիչ ձայնով մը, օր մը պիտի ցուցնես, այնպէս չէ՞։

— Երբե՛ք, երբե՛ք, պատասխանեց հայրը զայրոյթով։

Եւ աղջկանը թեւէն բռնելով գրեթէ բռնի դուրս հանեց զայն սենեակէն։ Երբ իր խուցը մտաւ, յանկարծ հանդարտեցաւ։ Շրթներն Օռօռի ճակտին դպցուց եւ ըսաւ ժպտելով։

— Դուն միշտ շփացած տղայ մըն ես, թող տուի որ տեսնես նկարներս, առաւել կամ նուազ շահեկան պատկեր-

ներ, ղորս երբեմն երբեմն կը գնեմ, երբ դիպուածը ցուցունէ ինձ հատ մը որմէ ախորժիմ։ Եթէ անոնցմէ մէկը կտաւով մը ծածկուած է, պատճառն այն է որ անարժան կը գտնեմ զայն իմ պզտիկ նկարասրահիս մէջ մնալու եւ չեմ ուզեր որ տեսնեն զայն։ Այսպէս, ըսածս պիտի ըլլայ. ալ պիտի չխօսիս այս բանին վրայ, այնպէս չէ՞։

— Ալ պիտի չխօսիմ ատոր վրայ, պատասխանեց Օւօւ տրտմօրէն գլուխը ծռելով։

Վայրկեան մըն ալ խօսակցեցան իրարու հետ, յետոյ Օւօւ ոտքի ելաւ երթալու համար։ Ամեն ատեննուան պէս կոմսն ընկերացաւ անոր մինչեւ փողոցը։ Այն ատեն ներս մտաւ երբ տեսաւ քուբէին Ռօշէ փողոցէն վար իջնելն եւ Բէրինիէռ փողոցին անկիւնէն անհետանալը։

Լուի չէր մոռցած որ իր նորատի սիրուհին ըսած էր իրեն "Չեմ ուզեր որ գիտնան, մանաւանդ հայրս, թէ այս իրիկուն դաստիարակուհւոյս պիտի երթամ։" Այն ատեն, կոմսին նայած միջոցին, Ռօշէ փողոցէն վար իջած էր որպէս թէ ուղղակի տուն պիտի դառնար։ Բայց, երբ Բէրինիէռ փողոցն հասաւ, ձախ կողմը դարձաւ եւ Ռօմ փողոցէն դէպ ի Պաթինեօլ ելաւ։

Մինչդեռ Քուբէն Ռօշէ փողոցէն վար կ'իջնէր, Օւօւ կ'ըսէր ինքնիրեն։

— Զարմանալի՜ բան։ Ինչո՞ւ հայրս քօղ մը դրեր է այդ պատկերին վրայ։ Ինչո՞ւ չուզեր որ տեսնեմ զայն։

Բայց շուտով մտքէն ելաւ այդ գաղափարն եւ այլ եւս ուրիշ բանի վրայ չխորհեցաւ բայց եթէ այն ուրախութեան եւ երջանկութեան զոր պիտի զգար վերստին տեսնելով իր դաստիարակուհին, այն զոր "մայրիկ" կոչել կը սիրեր։

---

Քառորդ մը չանցած քուբէն Տավլի փողոցը հասաւ եւ թիւ 6ին առջեւ կանգ առաւ։

Լուի վար ցատկեց իր նստած տեղէն ու դռնակը բացաւ։ Օւօւ վար իջաւ։

— Հո՞ս է, ըսաւ։

— Այո, օրիորդ, եւ ահա տան դուռը։

— Շնորհակալ եմ, Լուի։

Ներս մտաւ, եւ դռնապանուհւոյն ուղղելով խօսքը։

— Տիկին Տիւռա՞ն, հարցուց։

— Տիկին Տիւռան իր սենեակն է, ըսաւ դռնապանուհին, աչքերը խոշոր խոշոր բանալով, անշուշտ գեղանի աղջիկը լաւ տեսնելու համար. կրնանք վեր ելնել. երրորդ յարկն է, աջ կողմի դուռը։

— Շնորհակալ եմ, տիկին, ըսաւ Օւօւ շնորհալի կերպով մը։

Եւ թեթեւ քայլով մը, իր շրջազգեստին ծալքերը սեղմելով, սանդուղէն վեր ելաւ։

Զանգակ չկար նշանակուած դրան վրայ։ Զարկաւ ձեռքովը։ Իսկոյն աթոռի մը երերալը լսեց, յետոյ ոտքի ձայն մը, եւ դուռը բացուեցաւ։

— Ա՛հ, ա՛հ, ա՛հ, ըրաւ կոմսուհին, զոր զարմացումն եւ ուրախութիւնը կը խեղդէին։

Բայց թեւերը բացած էր, եւ ծաղկատի աղջիկն անոնց մէջ նետուեցաւ արտասանելով այն սիրուն եւ գողտրիկ բառը զոր մայրը չէր կրնար այլ եւս լսել, “մայրի՛կ„։ Յետոյ, վայրկեան մը, ուրիշ բան չլսուեցաւ բայց եթէ ժխորն առնուած ու տրուած համբոյրներուն։

Կոմսուհին դուռը գոցեց նորէն, եւ իր մէկ թեւովը աղջիկը գրկելով, տարաւ զայն բազմոցի մը մօտ, գլխաւոր կահն այդ սենեկին, պզտիկ ճաշասրահ մըն էր, եւ որ միանգամայն սալոնն էր դաստիարակուհւոյն։

Իրարու քով Նաստան եւ Օռօռ սկսաւ զննել այն առարկաները զորս չորս կողմը կը տեսնէր։

—⟡—

# Sprechübungen.

| | | |
|---|---|---|
| Բարի լոյս։ | *Pari luiss.* | Guten Tag. |
| Հրամանոց բարի լոյս կը մաղթեմ։ | *Hramanoths pari luiss gê maghthem.* | Mein Herr, ich wünsche Ihnen einen guten Tag. |
| Այս առաւօտ ի՞նչպէս էք։ | *Ajss arrawod inthschbêss êkh.* | Wie geht es Ihnen diesen Morgen? |
| Առողջութիւննիդ ի՞նչպէս է։ | *Arroghtschuthiunnit inthschbéss ê.* | Wie geht es mit Ihrer Gesundheit? |
| Առողջ է՞ք։ | *Arroghtsch êkh.* | Sind Sie wohl? |
| Առողջութիւննիդ աղէ՞կ է միշտ։ | *Arroghtschuthiunnit aghêg êmischd.* | Sind Sie immer wohl auf? |
| Ձեռք կուտայ․ իսկ ձերի՞նը։ | *Tserrkh gudai issg tserrinĕ.* | Ziemlich wohl, und Sie? |
| Ի՞նչպէս էք, աղէ՞կ էք։ | *Inthschbêss êkh, agheg êkh.* | Wie geht es Ihnen, gut? |
| Շատ աղէկ․ հրամանքնի՞դ։ | *Schad aghêg, hramankhnit.* | Sehr gut, und Ihnen? |
| Ջձեզ տեսնելէս ի վեր ի՞նչպէս եղաք։ | *Ztzĕz dessnelêss i wer inthschbĕss jeghakh.* | Ging es Ihnen wohl, seitdem ich Sie nicht gesehen habe? |
| Յուսամ թէ ողջ առողջ էք։ | *Jussam thê oghtsch arroghtsch êkh.* | Ich hoffe, Sie sind wohl. |
| Դէմքերնիդ աղէկ է։ | *Temkhernit agheg ê.* | Sie sehen gut aus. |
| Շատ աղէկ եմ։ | *Schad aghêg jem.* | Mir geht es sehr gut. |
| Փառք Աստուծոյ աղէկ եմ։ | *Parrkh Assdudsoi agheg jem.* | Gott sei Dank, mir geht es gut. |
| Սովորականիս պէս։ | *Ssoworaganiss bêss.* | Wie gewöhnlich. |
| Բարի տեսանք։ | *Pari dessankh.* | Ich freue mich, Sie zu sehen. |
| Այսօր ժամը քանի՞ն պիտի ճաշենք։ | *Aissor žamĕ khaniin bidi dschaschenkh.* | Wann werden wir heute zu Mittag speisen. |
| Ժամը չորսին պիտի ճաշենք։ | *Žamĕ thschorrsin bidi dschaschenkh.* | Wir werden heute um 4 Uhr speisen. |
| Պ. Բ.ին կը սպասեմ։ | *Baron P.in gĕ ssbassem.* | Ich erwarte Herrn P. |
| Հրամանքնիդ աղէկ քնացա՞ք։ | *Hramankhnit aghêg khnathsakh.* | Haben Sie gut geschlafen? |

| | | |
|---|---|---|
| Բարի իրիկուն։ | *Pari irigun.* | Guten Abend. |
| Գիշեր բարի։ | *Kischer pari.* | Gute Nacht. |
| Քուններնիդ անուշ ըլլայ։ | *Khunernit anusch ĕllaj.* | Ihr Schlaf sei ungestört. |
| Բարի ախորժակ։ | *Pari achoržag.* | Guten Appetit. |
| Նոյնպէս հրամանոց։ | *Nojnbêss hramanoths.* | Sie gleichfalls. |
| Երթա՛ք բարով։ | *Jerthakh parow.* | Glückliche Reise. |
| Ծառայ եմ։ | *Dsarrai jem.* | Ergebenster Diener. |
| Բարով եկաք։ | *Parow jegakh.* | Willkommen. |
| Ի՞նչպէս էք, աղէ՞կ էք։ | *Inthschbêss êkh, agheg êkh.* | Wie geht es Ihnen? |
| Գէշ եմ։ | *Kêsch jem.* | schlecht. |
| Սանկ նանկ։ | *Ssang nang.* | So so. |
| Ձեր հրամանաւ։ | *Tser hramanau.* | Mit Ihrer Erlaubniß. |
| Մնաք բարով Պարոն։ | *Mnakh parow baron.* | Adieu. Ich empfehle mich, mein Herr. |
| Այսօր ի՞նչ օր է։ | *Ajssor inthsch ôr ê.* | Welchen Tag haben wir heute? |
| Ժամանակին եկա՞ւ։ | *Žamanagin jegau.* | Ist er rechtzeitig gekommen? |
| Պր. բժշկին տունը ո՞ւր է։ | *Baron pžěschgin dun ur ê.* | Wo wohnt der (Herr) Arzt? |
| Հոս, առջի դստիկոն։ | *Hoss, arrtschi tssdigon.* | Hier, parterre. |
| Ի՞նչ նոր բան կայ։ | *Inthsch nor pan ga.* | Was gibt es Neues? |
| Հրամանքնիդ նոր բան մը չէք գիտեր։ | *Hramankhnit nor pan mě thschêkh kider.* | Wissen Sie nichts Neues? |
| Բան մը չիմացայ։ | *Pan mě thschimathsai.* | Ich habe nichts gehört. |
| Աս բանս ի՞նչ կ՚արժէ։ | *Ass panss intsch garžê.* | Wie viel kostet dies? |
| Շնորհակալ եմ։ | *Schnorhagal jêm.* | Ich bin dankbar. |
| Քաղաքը նոր ի՞նչ կը պատմուի։ | *Khaghakhě nor inthsch gê badměwi* | Was erzählt man in der Stadt Neues? |
| Լսեցի որ խաղաղութիւն պիտ՚որ ըլլայ։ | *Lssethsi or chaghaghuthiun bid'or ĕllaj.* | Ich habe gehört, daß Friede sein wird. |
| Որմէ՞ լսեցիք։ | *Uormě lssethsikh.* | Von wem haben Sie dies gehört? |
| Լրագրի մէջէն կարդացի։ | *Lrakri mêthschên gartathsi.* | Ich habe es in der Zeitung gelesen. |

| | | |
|---|---|---|
| Եղբօրէդ լուր մը առի՞ք։ | *Jeghporét lur mĕ arrikh.* | Haben Sie von Ihrem Bruder eine Nachricht empfangen? |
| Միւս օր գրած էր ինծի։ | *Miuss ôr krads êr intsi.* | Er hat mir neulich geschrieben. |
| Քանի որ գացած է նէ ինծի բան մը չէ գրած։ | *Khani uor kathsads ê nê intsi pan mĕ thschê krads.* | Seitdem er fort ist, hat er mir nicht geschrieben. |
| Կ՚աղաչեմ, շնորհք ըրէք, ըսէք ինծի։ | *Gaghathschem, schnorhkh, ĕrêkh éssêkh intsi.* | Bitte, seien Sie so gütig, sagen Sie mir. |
| Շատ սիրով։ | *Schad ssirow.* | Sehr gerne. |
| Ինչպէս որ հրամանքնիդ կ՚ուզէք։ | *Inthschbêss uor hramankhnit guzĕkh.* | Wie Sie wünschen. |
| Շատ կը բաղձամ հրամանոցը բանի մը մէջ ծառայել։ | *Schad gĕ paghtsam hramanoths pani mĕ mĕtsch dsarrajel.* | Es freut mich sehr, Ihnen in etwas zu dienen. |
| Կը ցաւիմ որ ատ բանը իմ ձեռքս չէ, բայց ինչ որ կրնամ ընել նէ կ՚ընեմ, տեսնեմ։ | *Gĕ thawim uor ad panĕ im tserrkhss thschê, pajths intsch uor grnam ĕnelnê gĕnem dessnem.* | Es schmerzt mich, daß dies nicht in meiner Macht liegt, aber das, was ich thun kann, wir werden sehen (eigentl. ich sehe). |
| Հրամանոցը շատ շնորհապարտեմ։ | *Hramanathsĕ schad schnorhabard jem.* | Ich bin Ihnen sehr verbunden. |
| Ի՞նչ ընելու է։ | *Inthsch ĕnelu ê.* | Was gibt es zu thun? |
| Ի՞նչ խորհուրդ կու տաք ինծի։ | *Inthsch chorhurt gu dakh intsi.* | Welchen Rath geben Sie mir? |
| Ես կ՚ըսէի որ։ | *Jess g'ései uor.* | Was mich betrifft, ich würde sagen, daß. |
| Թէ որ ես հրամանոցը տեղը ըլլայի։ | *The uor jess hramanothse deghê êllaji.* | Wenn ich an Ihrer Stelle wäre. |
| Ձեզ տեսնելուս շատ ուրախ եմ։ | *Tsiez diessneluss schad urach jem.* | Es freut mich sehr, Sie zu sehen. |
| Նախաճաշիկ ըրի՞ք։ | *Nachadschaschig ĕrikh.* | Haben Sie schon gefrühstückt? |
| Դեռ չէ։ | *Tierr thschê.* | Noch nicht. |
| Շատ ուրախ եմ. ինծի հետ նախաճաշիկ կ՚ընէք։ | *Schad urach jem, indsi hed nachadschaschig gĕnêkh.* | Ich freue mich dessen sehr, Sie können mit mir frühstücken. |
| Շատ մ՚ուշանար շուտով եկուր. հիմա կու գամ։ | *Schad m'uschanar schudow jegur, hima gu kam.* | Bleiben Sie nicht lange aus; ich komme sofort. |

| | | |
|---|---|---|
| Մեծաւ հաճութեամբ։ | *Medsau hadschutheamp.* | Mit Vergnügen. |
| Ի՞նչ կը հրամայէք։ | *Intsch gĕ hramajêkh.* | Was wünschen (befehlen) [Sie? |
| Չօգոլադ կը սիրէ՞ք։ | *Thschokolat gĕ ssirêkh.* | Trinken Sie gern Chocolade? |
| Երբեմն կը խմեմ։ | *Jerpem gĕ chmem.* | Manchmal (trinke ich). |
| Մարսելու համար գաւաթ մը սեւ ջուր պէտք է։ | *Marrselu hamar kawath mĕ ssieutschur bêdkh ê.* | Zur Verdauung ist eine Schale Kaffee nöthig. |
| Հրամանոց բարւոյն համար կ'ըսեմ։ | *Hramanoths parwojn hamar gĕssem.* | Ich meine (sage) es mit Ihnen ja nur gut. |
| Ինծի կերեւայ որ այսպէս պէտք է ընել։ | *Intsi gerewaj uor ajssbêss bêdkh ê ĕnel.* | Meiner Meinung nach müßte man es so machen. |
| Գնա, ինծի թուղթ, գրիչ ու թանաք գնէ։ | *Kna, intsi thughth, krithsch u thanakh knê.* | Gehe, kaufe mir Papier, Feder und Tinte. |
| Օդը ի՞նչպէս է այսօր։ | *Otĕ inthschbêss ê ajssor.* | Was für ein Wetter ist heute? |
| Օդը աղէկ է, գէշ է։ | *Otĕ agheg ê, kêsch ê.* | Es ist schönes, schlechtes Wetter. |
| Օդը յստակ է։ | *Otĕ issdag ê.* | Das Wetter ist heiter. |
| Տաք է։ | *Dakh ê.* | Es ist warm. |
| Շատ տաք է։ | *Schad dakh ê.* | Es ist sehr warm. |
| Ի՞նչ կ'արժէ աս շաքարին լիպրան։ | *Inthsch garžê ass schakharin libran.* | Was kostet ein Pfund dieses Zuckers? |
| Ըսէ Պարոնին որ ապուրը սեղանի վրայ է։ | *Essê baronin uor aburĕ sseghani wraj ê.* | Saget dem Herrn, daß die Suppe auf dem Tische ist. |
| Հրամայեցէք, նըստեցէք։ | *Hrammajethsêkh, nssdethsêkh.* | Belieben Sie sich zu setzen. |
| Այսօր շատ ախորժակ ունիմ։ | *Ajssor schad achoržag unim.* | Ich habe heute viel Appetit. |
| Բաւական կերայ։ | *Pawagan geraj.* | Ich bin satt. |
| Ծարաւ ունիմ, ջուր տուր։ | *Dsarau unim, tschur dur.* | Ich habe Durst, gebt mir Wasser! |
| Գաւաթ մը գինի խմեցէք։ | *Kawath mĕ gini chmethsêkh.* | Trinket ein Glas Wein. |
| Առողջութիւն։ | *Arroghtschuthiun.* | Zum Wohl. |
